ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-6-1-Ա

ք. Երևան 22.09.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի սեպտեմբերի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի սեպտեմբերի 4-ին «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչ Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված դիմումը «Сендвич» համակցված ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2019թ. մայիսի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ԱԾՄԴ «դաս 30. պաղպաղակ» ապրանքի համար:

Կոլեգիայի նախագահը և անդամները դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեցին, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում առկա տեղեկությունները ցույց են տալիս, որ «Сендвич» համակցված ապրանքային նշանը օգտագործման արդյունքում լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար «պաղպաղակ» ապրանքի համար 01.08.2020թ դրությամբ և ոչ թե խնդրարկվող 01.05.2019թ. դրությամբ: Հետևաբար ներկայացված «Сендвич» համակցված ապրանքային նշանը կարող է հանրահայտ ճանաչվել 01.08.2020թ. դրությամբ: «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության ներկայացուցիչը համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ նշելով, որ դիմումի մեջ նշվել է ապրանքի արտադրության թվականը:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, հաշվի առնելով «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության ներկայացուցչի առաջարկը, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների

քննարկման կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության «Сендвич» համակցված ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. օգոստոսի 1-ի դրությամբ ԱԾՄԴ «դաս 30. պաղպաղակ» ապրանքի համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը ամբողջովին բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ